

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆ

Աղասի Սիմոնի Այվազյանը հայ արձակագիր է, դրամատուրգ, հրապարակախոս, սցենարիստ, ռեժիսոր, խմբագիր և գեղանկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1982), ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր (1975, «Եռանկյունին» կինոնկարի սցենարի համար), Դերենիկ Դեմիրճյանի անվան մրցանակի 1983 թվականի դափնեկիր («Եռանկյունին» գրքի համար), ԽՍՀՄ գրողների միության անդամ 1963 թվականից:

Ծնվել է 1925 թ. սեպտեմբերի 7-ին Վրաստանի Ախալցխա քաղաքին մերձ Աբասթուման քաղաքատիպ ավանում: Սովորել է Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայում (1942), Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, Երևանի գեղարվեստաթատերական և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտներում (1945-1948): Տարբեր հիմնարկություններում աշխատել է որպես նկարիչ-մուլտիպլիկատոր, գծագրող, կոնստրուկտոր, լրագրող: 1965-1973 թվականներին եղել է «Գրական թերթի» արձակի բաժնի վարիչը, 1973-1981 թվականներին՝ «Էկրան» ամսագրի գլխավոր խմբագիրը: Որպես ռեժիսոր աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում, որտեղ 1967 թվականին նրա սցենարով նկարահանվել է «Եռանկյունին» կինոնկարը, որը երկրորդ մրցանակ է ստացել 1968 թվականի լենինգրադյան համամիութենական փառատոնում: 1990-ականների սկզբին խմբագրել է «Հայություն» շաբաթաթերթը: Նրա

սցենարով «Հայֆիլմը» նկարել է նաև «Հայրիկ» գեղարվեստական կինոնկարը: Ա. Այվազյանը նկարահանել է «Լիրիկական երթ» (1981), «Վառած լապտեր» (1985) ֆիլմերը:

Գրել է նովելներ, պատմվածքներ, պիեսներ, վիպակներ, էսսեներ, հրապարակախոսական հոդվածներ, կատարել թարգմանություններ: Նրա երկերում հաճախ միահյուսվում են սովորականն ու անսովորը՝ ներկայացնելով ժամանակակից մարդու հոգեբանությունը, արդիականությունն իր հակասական կողմերով: Ուշարժան են նրա հետևյալ ժողովածուները՝ «Ընտանիքի հայրը» (1968), «Փառահամար» (1973), «Սինյոր Մարտիրոսի արկածները» (1977), «Եռանկյունին» (1983), «Դիպլիպիտո» (1985), «Օբյեկտիվ-18» (1986), «Խորքի խորությունը» (2010):

Մահացել է 2007 թ. նոյեմբերի 21-ին Երևանում: